# 2015

## ՀԱՄԱՌՈՏ ՕՐԱՑՈՒՅՑ ՏՈՆԵՐԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

### ՀՈՒՆՎԱՐ (31 օր)
### ԱՅԾԵՂՋՅՈՒՐ

1 Հինգշաբթի, օր Ծննդյան պահոց: Տարեմուտ և Կաղանդ:
5 Երկուշաբթի, Ճրագալույց Ծննդյան և Աստվածահայտնության մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Նավակատիք:
6 Երեքշաբթի, ՏՈՆ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ:
Սուրբ պատարագի ավարտից հետո կատարվում է ջրօրհնեքի հանդես:
7 Չորեքշաբթի, Բ օր Ծննդյան: Հիշատակ մեռելոց:
13 Երեքշաբթի, Ը օր Ծննդյան: Տոն անվանակոչության մեր Տեր Հիսուս Քրիստոսի:
15 Հինգշաբթի, Տոն Ծննդյան Հովհաննես Մկրտչի՝ Սուրբ Կարապետի:
20 Երեքշաբթի, Տոն Թեոդոս Թագավորի և Եփեսոսի մանուկների:
24 Շբ. Տոն Կոստանդնուպոլսի Սուրբ Ժողովի 150 հայրապետների (381 թ.):
25 Կիր. Բ կիրակի Ս. Ծննդյան:
31 Շբ., Տոն Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և տասնչորս զինվորների:

### ՓԵՏՐՎԱՐ (28 օր)
### ՋՐՀՈՍ

1 Կիր. Գ կիրակի Ս. Ծննդյան:
7 Շբ. Տոն Սուրբ Իսահակ Պարթև մեր հայրապետի:
8 Կիր. Դ կիրակի Ս. Ծննդյան:
10 Երեքշաբթի, Տոն Սրբերի՝ Ղևոնդյանց քահանաների:
12 Հինգշաբթի, Տոն Սրբերի՝ Վարդանանց զորավարների մեր՝ 1036 վկաների, որոնք զոհվեցին Մեծ պատերազմում 451 թվականին Ավարայրի դաշտում:
Տոն անվանակոչության Նորին Վեհափառության Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ Սրբազնագույն Կաթողիկոսի Ամենայն Հայոց:
Սուրբ պատարագից հետո կատարվում է Մաղթանք Հայրապետական:
Տոն ազգային:
14 Շաբաթ, ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տոն 40-օրյա գալստյանն Քրիստոսի ի Տաճարն:
15 Կիր. ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ
16 Երկուշաբթի, Ա օր Մեծ Պահոց:
21 Շբ. Զ օր Մեծ Պահոց: Տոն Սուրբ Թեոդորոս զորավարի:
22 Կիր. Բ կիրակի Քառասնորդական պահոց /Արտաքսման կիրակի/:

### ՄԱՐՏ (31 օր)
### ՁՈՒԿ

1 Կիր. Գ կիրակի Քառասնորդական պահոց /Անառակի կիրակի/:
7 Շբ. Ի օր Մեծ Պահոց: Տոն մեր հայրապետ Հովհաննես Օձնեցու և վարդապետներ Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու:
8 Կիր. Դ կիրակի Քառասնորդական պահոց /Տնտեսի կիրակի/:
11 Չորեքշաբթի, ԻԴ օր Մեծ Պահոց: Միջինք:
14 Շբ. Օր քառասուն սուրբ մանուկների, որոնք Սեբաստիայում զոհվեցին:
15 Կիր. Ե կիրակի Քառասնորդական պահոց /Դատավորի կիրակի/:
21 Շբ. Օր Սուրբ Գրիգոր Լուսավորչի սոսկալի չարչարանքների և Վիրապը մտնելու (287 թ.):
22 Կիր. Զ կիրակի Քառասնորդական պահոց /Գալստյան կիրակի/:
28 Շբ. Հիշատակ Ղազարոսի հարության:
29 Կիր. ԾԱՂԿԱԶԱՐԴ /Ծառկոտրունք/:
Երեկոյան Դռնբացեք:
30 Ավագ Երկուշաբթի: Պահք:
31 Ավագ Երեքշաբթի: Պահք:
Հիշատակ տասն կույսերի:

### ԱՊՐԻԼ (30 օր)
### ԽՈՅ

1 Ավագ Չորեքշաբթի: Պահք:
2 Ավագ Հինգշաբթի: Պահք:
Հիշատակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի: Երեկոյան ոտնլվա:
3 Ավագ Ուրբաթ: Պահք: Հիշատակ չարչարանքների և խաչելության մեր Տեր Հիսուս Քրիստոսի:
4 Ավագ Շաբաթ: Պահք: Ճրագալույց Զատկի: Նախատոնակ:
5 Կիր. ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ: Հարություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի:
Ուտիք է մինչ Համբարձում:
6 Երկուշաբթի,. Բ օր Զատկի: Հիշատակ մեռելոց:
7 Երեքշաբթի, ԱՎԵՏՈՒՄԸ Սուրբ Աստվածածնի: Գ օր Զատկի:
8 Չորեքշաբթի, Դ օր Զատկի:
9 Հինգշաբթի Ե օր Զատկի:
10 Ուրբաթ, Զ օր Զատկի:
11 Շբ. Է օր Զատկի: Հիշատակ գլխատման Սուրբ Հովհաննես Մկրտչի:
12 Կիր. Կրկնազատիկ/Նոր Կիրակի/:
19 Կիր. Աշխարհամատրան /Կանաչ կիրակի/:
24 Ուրբաթ, 100-րդ տարելից Մեծ Եղեռնի բյուրավոր նահատակների մեր, որոնք զոհվեցին 1915 թվականին Արևմտյան Հայաստանում:
Եկեղեցիներում կատարվում է հոգեհանգիստ:
26 Կիր. Դ կիրակի/Կարմիր կիրակի/:

### ՄԱՅԻՍ (31 օր)
### ՑՈՒԼ

3 Կիր. Ե կիր: Տոն Երևման Սուրբ Խաչի:
9 Շբ. Հիշատակ զինվորների աշխարհազորայինների և զորավարների հայոց, որոնք զոհվեցին Հայրենական Մեծ պատերազմում և արցախյան գոյամարտում՝ հանուն հավատի և Հայրենիքի:
14 Հինգշաբթի, ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ Քրիստոսի: Տոն Չալթրի եկեղեցու:
Հիշատակ փոխադրության Հայրապետական Աթոռի Հայոց Սիսից Ս. Էջմիածին Տիրոջ 1441 թվականին:
Տոն է ազգային:
17 Կիր. Երկրորդ Ծաղկազարդ:
22 Ուրբաթ, Հիշատակ աշխարհազորայինների և զորավարների հայոց, որոնք զոհվեցին 1918 թ. Սարդարապատի հերոսամարտում՝ հանուն հավատի և Հայրենիքի: Եկեղեցիներում կատարվում է հոգեհանգիստ:
24 Կիր. Հոգեգալուստ /Պենտակոստե, 50-րդ օր Զատկից հետո/:
Բարեկենդան Եղիական պահոց:
28 Հինգշաբթի, Ոգեկոչումը հռչակման Հայաստանի Հանրապետության 1918 թվականին: Եկեղեցիներում կատարվում է մաղթանք գոհաբանական:
31 Կիր. Ա կիրակի Հոգեգալստյան: Հիշատակ Եղիա Մարգարեի:

### ՀՈՒՆԻՍ (30 օր)
### ԵՐԿՎՈՐՅԱԿ

1 Երկուշաբթի, Տոն Հռիփսիմյանց Սուրբ կույսերի:
2 Երեքշաբթի, Տոն Գայանեյանց Սուրբ կույսերի:
4 Հինգշաբթի, Տոն Սրբերի՝ Հովհաննես Կարապետի և Աթանագին եպիսկոպոսի: Եկեղեցական հանդես հանուն Սուրբ Շողակաթի:
6 Շբ. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելնելը Վիրապից /301 թ./:
7 Կիր. Տոն Կաթողիկե եկեղեցու Սուրբ Էջմիածնի:
9 Երեքշաբթի, Տոն Սուրբ կույսեր Նունեի և Մանեի:
13 Շբ. Տոն Սրբերի՝ Ներսես Մեծ հայրապետի մեր և Խադ եպիսկոպոսի:
14 Կիր. Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց, բայց տոներ են լինում:
20 Շբ. Գյուտ նշխարների Սուրբ Գրիգոր Լուսավորչի մեր:
23 Երեքշաբթի, Տոն Սրբերի՝ Դանիել մարգարեի և երեք մանուկների՝ Սեդրակի, Միսաքի, Աբեդնագովի:
25 Հինգշաբթի, Տոն մեր Սուրբ թարգմանիչներ Սահակի և Մեսրովբի:
Ազգային տոն: Եկեղեցական հանդես Օշականում:
27 Շբ. Տոն Սրբերի՝ Տրդատ թագավորի մեր, Աշխեն տիկնոջ և Խոսրովդուխտի:
28 Կիր. Գյուտ Սուրբ Աստվածածնի Տուփի:
30 Երեքշաբթի: Տոն Սուրբ Զաքարիա մարգարեի:

### ՀՈՒԼԻՍ (31 օր)
### ԽԵՑԳԵՏԻՆ

2 Հինգշաբթի: Տոն Սուրբ Եղիսե մարգարեի:
4 Շբ. Տոն Սրբերի՝ Քրիստոսի տասներկու առաքյալների և տասներեքերորդ առաքյալ Սուրբ Պողոսի:
5 Կիր. Բարեկենդան Վարդավառի պահոց:
6 Երկուշաբթի, Ա օր Վարդավառի պահոց:
11 Շբ. Հիշատակ Տապանակի հին և տոն նոր Սուրբ Եկեղեցու: Նավակատիք:
12 Կիր. ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպություն մեր Տեր Հիսուս Քրիստոսի:
Միջոց ուտիքը երեք շաբաթ է:
13 Երկուշաբթի, Բ օր Վարդավառի: Հիշատակ մեռելոց:
16 Հինգշաբթի, Տոն Սուրբ Եսայի մարգարեի:
18 Շբ. Տոն Սրբերի՝ Թադեոս Առաքյալի մեր և Սանդուխտ կույսի:
23 Հինգշաբթի, Տոն Սուրբ նախահայրերի՝ Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելիքսեդեկի, Աբրահամի, Իսահակի, Հակովբի, Հովսեփի, Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Հեսուի, Սամուելի, Սամփսոնի, Հեփթայեի, Բարակի, Գեդեոնի և այլոց:
25 Շբ.Տոն սրբերի՝ մեր Գրիգոր Լուսավորչի որդիների և թոռների՝ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի և Դանիելի:

### ՕԳՈՍՏՈՍ (31 օր)
### ԱՌՅՈՒԾ

1 Շբ. Տոն Գրիգոր Աստվածաբանի /389թ./
8 Շբ. Տոն Եփեսոսի Սուրբ Ժողովի 200 հայրապետների /431թ./:
9 Կիր. Բարեկենդան Սուրբ Աստվածածնի պահոց:
10 Երկուշաբթի, Ա օր Սուրբ Աստվածածնի պահոց:
15 Շբ. Տոն Շողակաթի Սուրբ Էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսածի:
16 Կիր. ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ:
Միջոց ուտիքը երեք շաբաթ է:
Խաղողի օրհնություն:
17 Երկուշաբթի, Բ օր Վերափոխման: Հիշատակ մեռելոց:
25 Երեքշաբթի, Տոն Սրբերի՝ Հովակիմի և Աննայի, ծնողների Սուրբ Աստվածածնի և Կանանց Յուղաբեր:
27 Հինգշաբթի, Տոն Սուրբ Երեմիա մարգարեի:
29 Շբ. Տոն Սուրբ առաքյալներ Թովմայի, Հակովբի և Շմավոնի:
31 Կիր. Տոն Գյուտի Գոտու Սուրբ Աստվածածնի:

### ՍԵՊՏԵՄԲԵՐ (30 օր)
### ԿՈՒՅՍ

3 Հինգշաբթի, Տոն Սուրբ Հովհաննես Կարապետի՝ Մկրտչի, և Հոբ արդարի:
5 Շբ. Տոն Նիկիայի Սուրբ Ժողովի 318 հայրապետների /325 թ./:
6 Կիր. Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց:
8 Երեքշաբթի, Բ օր Խաչի պահոց: Տոն ծննդյան Սուրբ Կույս Մարիամի Աննայից:
12 Շբ. Տոն Սուրբ Եկեղեցու Սուրբ Խաչի նավակատիքի:
13 Կիր. ԽԱՉՎԵՐԱՑ:
14 Երկուշաբթի, Տոն է Խաչի: Հիշատակ մեռելոց:
15 Երեքշաբթի, Տոն է Եկեղեցու:
16 Չորեքշաբթի, Պահք: Տոն է Եկեղեցու:
17 Հինգշաբթի, Տոն է Եկեղեցու:
18 Ուր. Տոն է Խաչի:
19 Շբ. Տոն է Խաչի:
20 Կիր. Բարեկենդան Վրագա Սուրբ Խաչի, բայց տոն է լինում:
22 Երեքշաբթի, Տոն Սուրբ կույսերի՝ Փեփրոնեի, Մարիանեի և Շուշանի՝ դստեր Վարդան Մեծի:
25 Ուր. Պահք: Նախատոնակ:
26 Շբ. Տոն Սրբերի՝ Գևորգ քաջամարտիկ զորավարի, Ադոկտոսի և Ռոմանոս երգեցողի:
27 Կիր. Տոն է Վարագա Սուրբ Խաչի /երևացել է 623 թ./:
Միջոց ուտիքը յոթ շաբաթ է:
28 Երկուշաբթի, Տոն Սուրբ Դավիթ Դվնեցու և Ղամբեոսի ու Ղամբեռնիու:

### ՀՈԿՏԵՄԲԵՐ (31 օր)
### ԿՇԻՌ

1 Հինգշաբթի, Տոն Սուրբ իշխանների՝ Սահակի և Համազասպի:
3 Շբ. Տոն Սրբերի՝ յոթանասուն երկու աշակերտների Քրիստոսի:
10 Շբ. Տոն Սրբերի թարգմանիչ մեր վարդապետների՝ Մեսրովբի, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու:
Տոն ազգային և եկեղեցական ի հիշատակ հայոց նշանագրերի գյուտի և Սուրբ Գրքի թարգմանության:
12 Երկուշաբթի, Գյուտ նշխարների Աղվանքի կաթողիկոս Սուրբ Գրիգորիսի և Սուրբ հայրերի՝ Թաթուլի, Վարոսի Թումասի, Անտոնի, Կրոնիդեի:
17 Շբ. Տոն Սուրբ Ավետարանիչների՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի:
19 Երկուշաբթի, Տոն Սրբերի Ղունկիանոս հարյուրապետի, որ հավատաց Քրիստոսի խաչելությանը և Հովսեփ Աստվածահոր, Հովսեփ Արեմաթացու և Քրիստոսի բարեկամ Ղազարոսի և նրա քույրեր Մարթայի և Մարիամի:
25 Կիր. Գյուտ Սուրբ Խաչի:
29 Հինգշաբթի, Տոն Սուրբ Հովհաննես Ոսկեբերան հայրապետի:
31 Շբ. Տոն ամենայն սրբերի՝ հների և նորերի, հայտնիների և անհայտների:

### ՆՈՅԵՄԲԵՐ (30 օր)
### ԿԱՐԻՃ

1 Կիր. Տասնվեցերորդ տարեդարձ օծման Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ Ծայրագույն Պատրիարքի և Սրբազնագույն Կաթողիկոսի Ամենայն Հայոց:
7 Շբ. Տոն Սուրբ Հրեշտակապետերի՝ Գաբրիելի և Միքայելի և ամենայն երկնային զորավորների:
14 Շբ. Տոն Սուրբ առաքյալներ Անդրեի և Փիլիպպոսի:
15 Կիր. Բարեկենդան Հիսնակի պահոց:
16 Երկուշաբթի, Ա օր Հիսնակի պահոց:
21 Շբ. Տոն ընծայման Սուրբ Աստվածածնի:
28 Շբ. Տոն Սուրբ Առաքյալներ և մեր առաջին լուսավորիչներ Թադեոսի և Բարդուղիմեոսի:

### ԴԵԿՏԵՄԲԵՐ (31 օր)
### ԱՂԵՂՆԱՎՈՐ

5 Շբ. Տոն Սրբերի՝ Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս հայրապետի և Սյուռոն եպիսկոպոսի:
6 Կիր. Բարեկենդան Ս. Հակովբի պահոց: Բայց տոն է լինում:
9 Չորեքշաբթի, Աննայի հղությունը Սուրբ Աստվածածնով:
12 Շբ. Տոն Սրբերի՝ Հակովբ Մծբնի հայրապետի, Մարուգե Ճգնավորի և Մելիտոս եպիսկոպոսի:
19 Շբ. Տոն Սուրբ Աբգարի նախավկա և Քրիստոսին անդրանիկ հավատացյալ թագավորի մեր:
24 Հինգշաբթի, Տոն Սրբերի՝ Դավիթ մարգարեի և Հակովբի՝ Տիրոջ եղբայր առաքյալի:
26 Շբ., Տոն Սուրբ Ստեփանոս Նախավկայի և առաջին մարտիրոսի:
28 Երկուշաբթի, Տոն Սուրբ առաքյալներ Պետրոսի և Պողոսի:
29 Երեքշաբթի, Տոն Հակովբ առաքյալի և Հովհաննես Ավետարանչի:
Բարեկենդան Սուրբ Ծննդյան պահոց: